228. ԽԱՍՓՈՒՇ ԱԴԵՐԸ

Մին շենում ադերը մեռալ էր, շենը մնացալ էր ընց ադեր, վեչ հրսանիք ին կարում անեն, վեչ խոխա կնքում, վեչ տոն օրթնում, վեչ էլ մեռալ ին կարում թաղեն։

Սա̈աը եր էր իլա̈լ, վեր փլան շենումը ադեր չի կա, ո̈նրանց մեռալնին կարում չեն թաղեն։

Մին խասփուշ, ըդերի՛ շո̈րեր կեցավ, փո̈րծո̈ջա̈ն քցեց ուսերավը, քյնա̈ց էտ շենը, քյոխվին կոխկը, ասեց.—Ես ադեր եմ, օղում եմ ձեր շենումը ըդըրոթուն անեմ, ձեր ժղովուրթին ծառան տա̈ռնա̈մ, թա̈ ղարուլ եք, ժա̈մին պլա̈նիքը ինձ տվեք, քյնա̈մ աստծու տոնը ավադ անեմ։

Քյոխվան ժա̈մին պլա̈նիքը տվավ էտ սուտլիկ ադերին, ինքը քյնա̈ց շենին մծըմեծանցը նհետ մըլըհաթի։ Վըրոշեցին էտ ադերին փորցեն։

Մին սաղ-սալամաթ մարթի փթըթեցին մին մեզա̈րի մեչ, մին քյո̈հնա̈ ղուլթու մեչ պըրնցրին, տարան ժա̈մ, ըդերին ըսեցին.—Էս մեռալը էքուց պետկա թաղենք, թող ժա̈մո̈ւմը կենա։ Մեռալը տրա̈ն ժա̈մին մեչտեղը, ադերը տո̈նը կապեց, քյնա̈ց տուն։

Էքսի ըռավետը ծեքը-ծեքին ադերը եկը ժա̈մ, տո̈նը պա̈ցա̈վ, օղեց թաղման ռեպետից անի, սվերի, վեր շինա̈ցո̈ց կոխկին շիլ չի ընգի, խայտառակ չինի։ Մին էրկու հետ էտ սոտ մեռալին չորս ղոլավը շոռ տվավ, շրական կարթաց, մին էլ եչեց, տեսավ էտ մեռալը տո̈րո̈ւր ա̈ կյա̈մ, զըմացավ, մտկումը ասեց.—Էս շինին ժղովուրթը հի՞նչ անխեղճ ժղովուրթ ա՞, թուղացալ չեն, թա̈ էտ խեղճ մարթը կարքին մեռնի, պերա̈լ էն տրա̈լ ժա̈մո̈ւմը։ Կյվա̈-

ղանը եր կալավ, տարավ պերձավ ննհենց եր պերձավ մեռալին քյալլին միջին, վեր էտ խեղճ մարթը ղուլթուն միջին թփըռեփին ըրավ, կարաց վեչ, թա կլոխը պըցըրցնի, մին պան ասի։ Սոտլիկ ադերը էնքան ըտրա կլոխը կյվըղղնավը եր թակեց, վեր խեղճ բեչարան հոքին տվավ։

Ադերը քափը-քրթնինքին միջին կորալ էր, վեր ժամին տուռու-նը պաց ըրավ, ժողովուրթը նի տանան, հի՞նչ տեսան, էտ կոտաղած ադերը սաղ սալամաթ մարթին կյվըղղնավը եր թեկըլած սպանալ էր։

Ադերը մին թոհմաթ էլ կարթաց էտ շինին մարթկանց կլխին, թա.—Տուք էտ հի՞նչ ժղովուրթ եք, հալա էտ մարթը կարքին մեռած չեր, շուտ եք ըրալ պերալ տրալ ժամունը, քիչ մնաց իմ հոքիս էլ տուս կյար, մինչև ընդըրա հոքին ղըկեցի արքայութուն։

Շենին ժղովուրթը վեր տեսան կիժ ադերին ըրարմունքը, յրա տանան, վենդի տակ տվին էտ ըդերին, էնքան կոխճան տվին, վեր ընդրա հոքին էլ ղըկեցին տժոխկը։